

խայրիքը (անդ. Ժ. 1, ԺԱ. 11): Հերովդէս Ազրիպպաս հոն պատժուեցաւ Աստուծմէ (անդ. ԺԲ. 19-24): Կեսարիոյ մէջ էր որ Պօղոս իր կեանքը ազատելու համար Երուսաղէմը թողլու ստիպուած ըլլալով՝ Տարսոն գացած է (անդ. Թ. 30): Յետոյ դարձեալ հոն եկաւ իր առաքելական երրորդ ուղևորութենէն վերջ (անդ. ԻԱ. 8) և հիւրընկալուեցաւ Փիլիպպոս սարկաւազին մօտ որ հոն կը բնակէր իր չորս մարզարէ ազջիկներով: Անկէ Երուսաղէմ գնաց Ագաբոսի գուշակութեանց և հաւատացեալներու աղաչանքին հակառակ (անդ. ԻԱ. 8-16): Հոն տարուեցաւ իբր բանտարկեալ, այն քաղաքին մէջ երկու տարի մնալէ վերջ Հռոմ երթալու և հոն կայսեր առջև դատուելու համար (անդ. ԻԳ. 23-33, ԻԵ. 1, 4, 6, 13, ԻԵ. 11-12): Առաքելական թուականի այս մեծ յիշատակները մեծապէս նպաստեցին որ Կեսարիոյ եկեղեցին ըլլայ Պաղեստինի ամենէն նշանաւոր եկեղեցիներէն մին: Քրիստոնեաներ շատ կանուխէն հոն խիստ բազմաթիւ էին և եպիսկոպոսները ազդեցիկ: Զատիկի խնդրոյն առթիւ ժողով մը գումարուեցաւ Բ. դարու վախճանին: Գ. դարու սկիզբը՝ Որոզինէս հոն ապաստանեցաւ և շարունակեց աստուածաբանութեան և մեկնաբանութեան իր աշխատանքը եպիսկոպոսին հովանաւորութեան տակ: Դ. դարուն սկիզբը, Եւսեբիոս՝ եկեղեցիին առաջին պատմագիրը եւ Պաղեստինի առաջին աշխարհագիրը, հոն արքեպիսկոպոս ընտրուեցաւ (D. Bl. բառն Cesarée du bord de la mer, էջ 456-458):

Սաչակիրներու տիրապետութեան օրով Կեսարիան դարձեալ կեդրոն եղաւ բարգաւաճման. նորոգուեցան բիւզանդական շրջանէն մնացած եկեղեցիները և շին-